ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է Ազգային ժողովի կողմից
3 փետրվարի 1998թ.

«ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ»

Հոդված 9. Ուղևորների, բեռների, ուղեբեռների փոխադրումը և բեռնառաքումը

1. Ուղևորների, բեռների, ուղեբեռների փոխադրումը և բեռնառաքումը կատարվում է փոխադրման պայմանագրի հիման վրա:

2. Ուղևորների, բեռների, ուղեբեռների փոխադրման և բեռնառաքման պայմանները, կողմերի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են սույն օրենքով, այլ օրենքներով և իրավական ակտերով, փոխադրման պայմանագրով:

3. Ուղևորների փոխադրման պայմանագրի համաձայն՝ փոխադրողը պարտավոր է ուղևորին և ուղեբեռը փոխադրել նշանակման վայր, իսկ ուղևորը պարտավոր է վճարել ուղեվարձը և ուղեբեռի փոխադրման վճարը: Օրենսդրությամբ սահմանված դեպքերում պայմանագրին կցվում են տոմսը և ուղեբեռի հաշիվը:

4. Բեռների փոխադրման պայմանագրի համաձայն՝ փոխադրողը պարտավոր է բեռնառաքողից ստացած բեռը նշանակման վայր փոխադրել և հանձնել լիազորված անձին, իսկ բեռնառաքողը պարտավոր է վճարել պայմանագրով կամ սակագներով նախատեսված փոխադրավարձը: Օրենսդրությամբ սահմանված դեպքերում բեռների փոխադրման պայմանագրին կցվում են բեռնագիրը և բեռնառաքման համար անհրաժեշտ փաստաթղթերը:

5. Չարտերային փոխադրման պայմանագրի համաձայն՝ կողմերից մեկը մյուս կողմին է տրամադրում տրանսպորտային միջոցի տարողությունը կամ դրա մի մասը:

6. Կանոնավոր փոխադրումների անհրաժեշտության դեպքում կողմերը կարող են կնքել փոխադրումների կազմակերպման պայմանագիր, որի համաձայն՝ փոխադրողը պարտավոր է պարբերաբար ընդունել, իսկ բեռնառաքողը՝ փոխադրման ներկայացնել սահմանված քանակությամբ բեռ: Կանոնավոր փոխադրումների կազմակերպման մշտական պայմանագիրը պարունակում է փոխադրումների ծավալը, պարբերականությունը, փոխադրման որակը, տրանսպորտային միջոցների հատկացման և բեռների փոխադրման այլ պայմաններ, որոնք օրենքով նախատեսված չեն և օրենքին չեն հակասում:

~~7. Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային, տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնում են միայն մրցութային եղանակով ընտրված կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը, բացառությամբ~~

~~ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող օպերատորի կողմից իրականացվող ներհամայնքային ավտոբուսային կանոնավոր փոխադրումների: Մրցույթի անցկացման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:~~

7. Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնում են մրցութային եղանակով ընտրված կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը, իսկ ներհամայնքային կանոնավոր փոխադրումների դեպքում՝ նաև «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան իրականացված գնման գործընթացի միջոցով ընտրված օպերատորի կամ 100 տոկոս համայնքային մասնակցությամբ կազմակերպության կողմից: